ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն՝ --------------------------------------- «---------» ------------------------ 2023 թ.

**Երևանի Հ. Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոցի 10/5դասարան, դասղեկ՝ Ն. Գյուլնազարյան**

**Դասղեկի տարեկան աշխատանքային պլան**

**2023- 2024 ուսումնական տարի**

## ԿՐԹԱ-ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Դասարանի ընդհանուր բնութագիր

10_5 դասարանը բաղկացած է 19աշակերտից՝ 8 աղջիկ, 11տղա:Սովորողները կարգապահ են, առաջադիմությունը լավ է: Հետևում են ներդպրոցական կարգ ու կանոնին:Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

**Հոգևոր դաստիարակություն** Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպ ի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

**Գեղագիտական դաստիարակություն**
Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

**Ռազմահայրենասիրական**

Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայինների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

**Ֆիզիկական դաստիարակություն**
Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կփոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

**Աշխատանքային դաստիարակություն**
Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

**Բնապահպանական դաստիարակություն**
Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրները գլոբալ են:

**Դպրոց-ընտանիք կապը**
Դպրոց-ընտանիք կապը երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիս անում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:Անցկացնել ծնողական ժողովներ:Կապ պահպանելծնողդպրոց-ուսուցիչ:Ուսումնասիրել աշակերտների սոցիալական պայմանները:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիրակչական աշխատաքի բովանդակությունը | Կատարման ժամկետը |
|---|---|---|
| | Գիտելիքի օր | 01. 09. 23թ. |

| | | |
|---|---|---|
| I | Աշակերտական խորհրդի ընտրություն,հերթապահության կարգացուցակ,դասարանական ժողովի անցկացում | 04.09.23թ. |
| II | Իմ երազանքներն ու նպատակները այս տարում | 11.09.23թ. |
| III | Զրույց Անկախության 32 ամյակին նվիրված | 18.09.23թ. |
| IV | COVIDի և այլ համաճարակային հիվանդությունների կանխարգելման միջոցների կիրառումը | 25.09.23թ. |
| V | Ուսուցչի օրվա կապակցությամբ զրույց հայտնի հայ մանկավարժների մասին | 04.10.23թ. |
| VI | Զրույց Երևանի օրվա վերաբերյալ,ինչ հայտնի երևանցիների գիտեմ | 11.10.23թ. |
| VII | Ավագ դպրոցի կայացման և գործունեության մասին մտքերի փոխանակում | 18.10.23թ. |
| VIII | Ինչու եմ ընտրել տնտեսագիտական հոսքը:Ինչ գիտեմ տնտեսագետի գործառույթի մասին | 30.10.23թ. |
| IX | Զրույց Ինչ գիտեմ իմ դպրոցի պատմության մասին թեմայի շուրջ:Ո՞վ է եղել Հ.Գալստյանը,որի անունը կրում է իմ դպրոցը: | 06.11.23թ. |
| X | Մի շարք առարկաների դասերի անցկացումը համակարգչային դասասենյակում | 13.11.23թ. |
| XI | Կրեդիտային համակարգի կիրառումը դպրոցներում(քննարկում) | 20.11.23թ. |
| XII | Առողջ ապրելակերպը մեր կյանքում | 27.11.23թ. |
| XIII | Զրույց աշխատասիրության մասին վերաբերյալ,կարևորել աշխատանքը որպես բարիք ստեղծելու միջոց | 04.12.23թ. |
| XIV | Հայեցի դաստիարակությունը և ազգային ավանդույթների պահպանումը մեր կյանքում | 11.12.23թ. |
| XV | 1_ին կիսամյակի ամփոփում | 18.12.23թ. |
| XVI | Նոր տարին նոր ակընկալիքներով | 08.01.24թ. |
| XVII | Կազմակերպչական հարցեր | 15.01.24թ. |
| XVIII | Գեղեցիկի ընկալումը | 22.01.24թ. |
| XIX | Զրույց նվիրված Հայոց բանակի օրվան | 29.01.24թ. |
| XX | Ի՞նչ է կիբեռանվտանգությունը | 05.02.24թ. |

| | | |
|---|---|---|
| XXI | Տյառնընդառաջ | 12.02.24թ. |
| XXII | Ինչ գիրք եմ նվիրել ընկերոջս | 19.02.24թ. |
| XXIII | Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները | 26.02.24թ. |
| XXIV | Շնորհավոր մարտի 8 | 04.03.24թ. |
| XXV | Կանանց տոների միամսյակ | 11.03.24թ. |
| XXVI | Բնության պահպանության կարևորությունը | 18.03.24թ. |
| XXVII | Նորագույն տեխնոլոգիաների դերը մեր կյանքում | 01.04.24թ. |
| XXVIII | Մայրության և գեղեցկության տոնի խորհուրդը | 08.04.24թ. |
| XXIX | Սուրբ Զատիկ | 15.04.24թ. |
| XXX | Ջրույց նվիրված ցեղասպանությանը | 22.04.24թ. |
| XXXI | Քաղաքացու օրը | 29.04.24թ. |
| XXXII | Մայիսյան հերոսամարտեր | 06.05.24թ. |
| XXXIII | Առաջադիմության հարցերի վերաբերյալ քննարկում | 13.05.24թ. |
| XXXIV | Տարեկան արդյունքների ամփոփում | 20.05.24թ. |
| | | |
| | | |
| | | |
| | | |